

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԼԵԱՃԵԼԻ ՎԱՂ ԲՐՈՒԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՆԱՅԻՆ ՀԱՍԱԼԻՐՆԵՐԸ

Սևանի ավագանը Հայաստանի Բ/Ե դարաշրջանների հուչարձաններով հարուստ տարածքներից է: Սակայն մինչ այժմ հայտնի ՎԲ հուչարձանները սակավաթիվ են: Դրանք հայտնի են Լճաշենում (Մանգականյան Հ., 1965, 95–96), Նորաշենում (Саядлян Ю., Аллшинская З., Խանզադյան Թ., 1977, 91–109), Կարճադրուրում, Այրիվանքում,* Սարուխանում,** ինչպես նաև Կամոյում (Գավառ), Աստղաձորում, Ակունքում, Ծովինարում (Է. Խանզադյան, 1967, 19): Վերջերս հայ-իտալական արշավախմբի շրջանակում (Bishone R. And al., 2002) հայտնաբերված յոթ ՎԲ հուչարձանների ուսումնասիրությանն է նվիրված արշավախմբի մասնակից Գ. Թումանյանի ուսումնասիրությունը (Tumanyan G., 2002, p. 251–252, 267–268, tab. 1,2): Մեկ այլ արշավախմբի կողմից նոր ՎԲ նյութեր են հայտնաբերվել Սուտք երկուսից (Kunze R., et.al, 2013, 57–58): ՎԲ նյութեր են հայտնաբերվել նաև 2005թ. Արտանիշում:** Նշված հուչարձանների մի մասի՝ նախապես ավերված, մյուս մասի՝ փաստագրական տվյալների կցկուուր լինելու պատճառով, հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել տարածաշրջանի խնդրո առարկա մշակոյթի մասին: Սևանի ավագանում դամբանաշինության, թաղման ձևերի վերաբերյալ որոշ պատկերացում կարող ենք կազմել 1998թ. Լճաշենի դամբանադաշտից ոչ հեռու, դրան արևելքից հարող՝ Չկալովկա գյուղի մոտակայքում պեղված թիվ 2 դամբարանի միջոցով:

Դամբարան 2 (Չկալովկա) – ՎԲ դամբարանի վերգետնյա նշանները չեն պահպանվել:

* Պեղումները՝ Հ. Մանգականյանի, չիրատարակված նյութեր:

** Պեղումները՝ Ա. Փիլիպոսյանի, չիրատարակված նյութեր:

*** Նյութերը գտնվում են տեղի բնակիչ Արգիշտիի մոտ:

Գետններես երևում էին երեք ծածկասալերի որոշ հատվածներ: Քիչ ճվածիր քարարկղային հատակագծով դամբանախուցը կուսիս-արևմուտքից հարավ-արևելք առանցքով ձգվում էր 1,57մ, կուսիս-արևելքից հարավ-արևմուտք՝ 1,52մ, կառուցված էր 1,10մ բարձրության ուղղահայաց դիրքով շարված որձաքարերով: Արևելյան պատի մեջ բացված էր 0,60մ լայնությամբ մուտք, ծածկված՝ մեկ սպառագրով: Դամբանախցում, արևմտյան պատի դիմաց բացվել է իրար վրա դրված մարդկանց վեց կմախք: Մուտքի առջև, փոքր տարածքում կատարված էր վերջին թաղումը (աղ. 1), որտեղ դրված էին ժամանակով ավելի ուշ, իրանի շեշտված անցումներով խեցանորթներ (աղ. 2, նկ. 1–3, Պետրոսյան Լ., 2002, 26–31):

Այս դամբարանում հայտնաբերվել են ժամանակով միմյանցից քիչ տարբերվող նյութեր (աղ. 2, աղ. 3):

Նպատակահարմար ենք համարում թիվ 2 դամբարանի նյութերի հետ, քննության առնել Հ. Մանգականյանի պեղած թիվ 146 դամբարանի համաժամանակյա նյութերը (աղ. 5):

Թիվ 2 դամբարանում հայտնաբերված կավամաններն աշքի են զարնում միօրինակությամբ՝ կճուճ-գավալթներ և քրեղան-քասեր, որոնք ձևով բաժանվում են երկու տարրերակի: Կճուճ-գավալթների առաջին տարրերակ (աղ. 3, նկ. 2–4). Թիվ 2-ը արտաքուստ և ներքուստ սև է, թիվ 3-ը գորշ է, թիվ 4-ը՝ սև փայլեցված, ներսից՝ դերնավուն: Զետով այս խմբին են դասվում նաև Լճաշենի թիվ 146 դամբարանի գավաթները (աղ. 5, նկ. 4, 5):

Երկրորդ տարրերակին պատկանողները (աղ. 2, նկ. 1-3) նախորդներից տարրերվում են ընդգծված ետամասնությամբ, հատակի ներմկվածությամբ, իսկ շորթից սկավող կանթերը վե-

թին մասում կազմում են եռանկյունաձև հարթակ:

Առաջին խմբին պատկանող կճուճ-գավաթները (աղ. 2, նկ. 1-3) և քրեղանները (աղ. 2, նկ. 5-8) բնորոշ են Էլատի հիմնահողային թիվ 14 և այլ վաղ թվագրվող դամբարանների նյութերին (Խանզայյան Ե., 1979, 36-49, նկ. 44, 41, 43, 46, 53 և այլն): Սրանց հավաքածուներում խապատ բացակայում է Չկալովկայի անորների երկրորդ՝ շեշտված անցումներով տեսակը: Նշված նյութերին մոտ է միայն Էլատի թիվ 11 դամբարանի անորը (Խանզայյան Ե., 1979, 53, աղ. VIII): Վերջինս չուփի այն հատակ եռամասնությունը, որն իրավամբ համարվում է տվյալ փոփլի ուշ արտահայտություն:

Էլայան պատկերը կրկնվում է նաև Քեթինում, որտեղ Չկալովկայի խեցելենի վերոհիշյալ տեսակները հանդես են զալիս ՎԲ վաղ փուլով թվագրվող դամբարաններում (Պետրօսյան Լ., 1989, 26-32): Ուսումնասիրվող նյութերի երկրորդ տեսակը Քեթինում առկա է միայն զարգացման հաջորդ փուլով թվագրված թիվ 8 դամբարանում (Պետրօսյան Լ., 1989, 33): Սնուավորապես նման պատկեր է դիտվում Գառնիի ընսկատեղիում: Այսուել ևս ուսումնասիրվող առաջին և երկրորդ խմբերին պատկանող անորները համատեղ են (Խանզայյան Ե., 1969, նկ. 62-66): Դրանց տարրերությունն այն է, որ երկրորդ խմբի նմուշները մեր օրինակներից զանազանվում են անցումների սահունությամբ, որն ուսումնասիրողը համարում է փոքր-ինչ ուշ թվագրվող հատկանիշ: Նյութերի համադրությամբ՝ Չկալովկայի պատկերն ենք տեսնում Հռոմեականակատեղիի Ք.ա. IV հազ. վերջով և III հազ. սկզբով թվագրվող շերտում (Badalyan R. et al., 1992, f. 5), ինչպես նաև Գեղարտուում (Բադալյան Ռ., Սմիտ Ա., 2008, 45-54), և Արագածի՝ դամբարանում:

Ուսումնասիրվող խեցանորթների միայն առաջին տեսակը առկա է Լանջիկի դամբարանում (Դեսրոսյան Լ., 1996, 60-61): Չկալովկայի նյութերին համադրելի են նաև Զրվեժի (Ժումանյան Գ., 1993, 7-13) և Թալինի նյութերը (Badalyan R., Avetisyan P., 2007, pl. IV, V):

Ժամանակագրական առողջում կարևոր նշանակություն ունեն վերջին տարիներին պեղված

Ապարան III համանան նյութերի առկայությունը և դրանց ուղիղաձիածնային անալիզների արդյունքները՝ (Բադալյան Ռ., 2003, 20-23) 3350-2920, այն է՝ տվյալ դամբարանների ՎԲ վաղ փուլերին պատկանելը: Ժամանակագրական նման արդյունքները ունեն նաև Թալինի վերը հիշատակված թիվ 11 դամբարանի նյութերից ստացված տվյալները: Հիշյալ ժամանակով են թվագրվում Իգդիրի շրջանի Յայջի և Գյուկչի գյուղերի մոտակայքում պեղված հուշարձաններից հայտնաբերված համանան նյութերը (Burneyc C., 1958, 133-134, 88-91), Գյոյ Ժենիեի K-1 և K-2 շերտերից (Burton-Brown T., 1948, 8-9), ինչպես նաև Կորազի՝ 9-8 մ խորությունից (Կոշնարեա Կ., Կյանիշվիլի Տ., 1970, բաց. 24), Խիզանաատ գորայի Ե շերտից (Կոշնարեա Կ., Կյանիշվիլի Տ., 1970, 74, բաց. 26), Նախիջևանի Քյուլ-Ժենիեի սոորին շերտից (Աբիբուլլաև Ա., 1959, բաց. 29, Աբիբուլլաև Ա., 1982, բաց. XIX-XX), Ասիրանիսի գորայից (Կյանիշվիլի Տ., 1969, բաց. VII), Սամշվիլիյի դամբարաններից (Միրցհուլավա Գ., 1975, բաց. 35) և բնակատեղիի II շերտից (Միրցհուլավա Գ., 1979, բաց. XIX), Բարա Դերվիշից (Исмайлолов Г., 1978, 24-34), Օզիից (Կյուտին Բ., 1947, բաց. XXXIV) գտնվածները: Հայտնաբերված համանան նյութերի այս խմբին են դասվում նաև Զեմո-Ավճալայի (Կյուտին Բ., 1947, 68) և Ստորին Ղոմիի բնակատեղիի սոորին շերտից հայտնաբերված կճուճ-գավաթները, որոնց ուսումնասիրողը համարում է մետաղի երևան զալու վաղ շրջանի արտեֆակտները (Կյուտին Բ., 1947, բաց. 34 և 43): Խնդրո առարկա նյութերը մեծ թիվ են կազմում նաև Իգդիրի (Կյուտին Բ., 1943, բաց. XVII), Բարմաղազից (Կյուտին Բ., 1941, բաց. 117) և Դիլուրի դամբարաններում (Կյուտին Բ., 1941, բաց. 123): Դիլուր-կիկեթյան խմբին են հարում Կորա գյուղի մոտակայքում պեղված հիմնահողային և քարարկանին դամբարաններից հայտնաբերված խեցանորթները (Փհակած Շ., 1976, 45-48): Վերը նշվածներից թվագրության հարցում կարևոր նշանակություն ունեն և Ժուելի հնավայրի ստորին շերտի նյութերը, որոնք թվագրվում են Ք.ա. IV հազ. վերջով - III հազ. սկզբով: Այդ շարքում կան նաև բուսական խառնուրդով պատրաստված նյութեր, որոնք հավաքածուին իրավամբ տպիս են արխակի տեսք (Աբրամիշվիլի Ռ., 1978, 23-24, 43): Նոյն ձևերն ունեն նաև Գրմախիսիթավիի վաղ խմբին պատկանող կճուճ-գավաթները և թաս-քրելզանները: Չկա-

* Պետրոսյանը՝ Ռ. Մ. Թողրապահը, չիրատարակված նյութեր:

լովկայի նյութերի հետ մեծ ընդհանրություններ ունեն նաև Կարպայի հիմնահողային դամբարանների (Կազիև Ը., 1969, 42–48) և Ֆիզովիի մոտ գտնվող Ուզունթեփէ քնակատեղիի նյութերը (Իսմայլօվ Ռ., 1973, 70–79, բաց. 2):

Քրեղանների մյուս տեսակն ունի լուսած սև և գորշ երանգներով ներքին ու արտաքին մակերես (աղ. 3, նկ. 6): Սրա խեցին կորվածքում երկշերտ է և ձևով մոտ Գյոյ թեփեի Կ շերտի (Կյանքարեա Կ., Կյանքարեա Տ., 1970, 90, բաց. 35) և Ռ. Թորոսյանի կողմից Արագածում պեղված ու վերը հիշատակված դամբարանի նյութերին:

Մյուս անորթ գնդաձև իրանով, թերի շուրջընվառ թափ, որի շորջի տակ նշմարվում է կոտրված բռնակի հիմնամասը (աղ. 3, նկ. 1): Այս անորթ համեմատաբար կոպիտ խեցին կորվածքում մրաշերտ է: Ներսի մակերեսը սև է, արտաքին ունի գորշ և վարդագույն երանգներ: Ճշշու նոյն ձևն ունի Հատիճի քնակատեղիից հայտնաբերվածը (Խաչագրյան Տ., 1975, 69, բաց. 31 ա): Զկալարվայի նմուշին ձևով մոտ են նաև Նախիժնասանի Գյոյ թեփեից (Աճիցուլյան Ա., 1956, թ. V) և Գյոյ թեփեի Հ փուլից գտնված թաս-քրեղանները (Burton-Brown Տ., 1951, 108, Fig. 27):

Ի տարրերություն նշված բոլոր անորթների, այս հավաքածուի սև փայլեցված արտաքին մակերեսով, վարդագույն աստառով գավաթի խեցին կորվածքում երկշերտ է (աղ. 2, նկ. 4): Նմանակները հայտնի են Գառնիից (Խանզադյան Է., 1969, 57, նկ. 54), Էլատի թիվ 26 դամբարանից (Խանզադյան Է., 1979, նկ. 76), Դվինից (Կյանքարեա Կ., 1977, 10), Արևիկից (Խանզադյան Թ., 1969, 162): Նման մեծ թվով զավաքներ հայտնի են հատկապես Թուլիի քնակատեղիի ստորին շերտից (Տեղուած 1, 1978, 37) և Սամշվիլիի դամբանադաշտից (Միրցխուլան Գ., 1975, թ. XL): Ինչպես տեսնում ենք, ներկայացված զավաքները գոյատևել են Կուր-արաքյան մշակույթի բոլոր փուլերում: Ուսումնասիրվող դամբարանի մրակ մետաղից զարդը բրոնզե, մեկուկես զալարով ապարանչան է (աղ. 2, նկ. 9):

Դասնալով Զկալարվայի թիվ 2 դամբարանի խեցեղենի երկրորդ խմբին (աղ. 2, նկ. 1–3), նշնաք, որ դրանց զարդարում տեսակներն առավել բնորոշ են Արարատյան դաշտի հուշարձաններին: Անզարդ օրինակները սակավ թվով հանդիպում են նաև Հայաստանի նախալեռնային և լեռնային շրջաններում: Դրանց թվին է պատկանում Քերթի ՎԲ երկրորդ փուլին պատ-

կանող թիվ 8 դամբարանը (Պետրօսյան Լ., 1989, 43):

Այսպիսով, Զկալարվայի թիվ 2 դամբարանի նյութերի հիմնական ձևերի համեմատական ուսումնասիրման հիման վրա կարող ենք փաստել, որ այս դամբարանը կարող է թվագրվել Ք.ա. IV հազ. վերջով և III հազ. սկզբու:

Հետաքրքիր նյութեր են հայտնի 1966 թ. Հ. Մանացականյանի կողմից Լճաշենում պեղված թիվ 146 դամբարանից: Ցավոր, դամբարանի կառուցվածքը մասում է անհայտ: Այստեղ առկա է խեցեղենն արտադրանքի ուղ նմուշ: Կրկնությունից խուսափելու համար նշնաք, որ այս խմբի գավաթները (աղ. 5, նկ. 4, 5) և քրեղանը (աղ. 5, նկ. 8) ամբողջությամբ նախորդ դամբարանի նույնանման իրերի կրկնությունն են, այն տարրերությամբ, որ Լճաշենի քրեղանի կամքը բազմանիստ է: Ինչ վերաբերում է կրթսանին (աղ. 5, նկ. 3), ապա այս իր ձևով համապատասխանում է վերոհիշյալ գավաթների ձևերին՝ տարրերվելով մրայն չափերով: Նախորդ դամբարանի մյուս անորթ կրկնությունն է նաև այս դամբարանի մրակ թասը (աղ. 5, նկ. 6): Թիվ 146 դամբարանի նյութերի մրակ տարրերությունը նախորդից այն է, որ բացի վերոհիշյալ խեցանորթներից, առկա է հենակ-պատվանդանների երկու օրինակ (աղ. 5, նկ. 1, 7, Պետրօսյան Լ., 2003, 77–82):

Սոաջնոր ձեռածեփ է, փուլած շուրջընվառ, լայն ու հարթ հատակով (աղ. 5, նկ. 7): Այս տեսակը հայտնի է Հայաստանի ՎԲ հուշարձաններից, հիմնական մասով՝ Արարատյան դաշտի հնավայրերից: Հայտնի են նաև Բջնիից (Խանզադյան Է., 1967, աղ. XVIII, Սարդարյան Ս., 1967, 128), ինչպես նաև Էլատից (Խանզադյան Է., 1979, 27–39): Եզակի օրինակներով հայտնաբերվել են մրայն Շիրակավան (Թորոսյան Ռ. և այլը, 2002, աղ. IV), Գառնի (Խանզադյան Է., 1969, աղ. XX) և Կառնուտ (Badalyan R., Avetisyan P., 2007, PL VI) ՎԲ քնակատեղիներից:

Խեցեղենի այս տեսակի օգտագործման մասին որոշ պատկերացում ենք կազմում Էլատի դամբարաններում հայտնաբերվածներից, որտեղ, դրանցից մեկը կրում է խեցանորդ: Բացի այդ, ինչպես նկատել է Է. Խանզադյանը, դատելով դրանց շուրջերի փոփածությունից, այդպիսիք՝ կենցարային անորթներ գործածվելու համար հարմար չեն (Խանզադյան Է., 1979, 27–39):

Նշված փաստերը մատնացույց են անում, որ դրանք ծառայել են որպես պատվանդաններ

ինչպես ամենօրյա կենցաղում, այնպես է ծիսական արարողությունների ժամանակ: Չի բացառում նաև դրամցում խնկարկում կատարելու:

Հարկ է նկատել, որ ծիսական նպատակներին ծառայելու առումով առավել հարմար են Բարձ-Դերվիշից մեծ քանակությամբ հայտնաբերված բաց հատակով օրինակները (Խմայլով Շ.՝ 1978, 43): Դրանք հավանաբար օգտագործվել են ծիսական արարողությունների ընթացքում, խնկարկման համար, ինչպես նաև դրվել են սրբազն, հավերժական կրակին և իրենց հերթին կրել այլ անորթներ ու իրեր:

Փակ հատակով պատվանդաններ, որոնք անորթներ են անվանված, հայտնի են Սիակլ I (Վայլդ Շ., 1956, 291) և Դեմիրմեն թեփեի օրեինյան մշակույթում (Esin U., 1983):

Երկու դեպքում է ներկայացված նմուշները գունազարդ են: Համանման է նաև Պաղեստինի գասույան մշակույթին (Ք.ա. IV հազ.) պատկանող օրինակը (ԱՅԱ, 1986, 77), որի ասորին մասում առկա հանվածքները հիշեցնում են ավելի ուշ շրջանի օրինակներ:

Հայաստանի հատակով պատվանդանների նմանակները հայտնի են նաև Հունաստանի Ք.ա. IV–III հազ. ժամանակաշրջանի մշակույթից (Մոհրայտ Ա., 1973, 215), իսկ Հարավսարվայիայի Ք.ա. III հազ. I քառորդին պատկանող պատվանդանը կրկնում է Էլատի գտածոյին, որն իր վրա նույնպես անորթ է կրում (Մոհրայտ Ա., 1973, 221) ու ևս մեկ անզամ հավաստում դրանց պատվանդան լինելու:

Ուսումնասիրվող դամբարանի երկրորդ հենակ-պատվանդանը միանգամայն այլ է: Այն ունի հարթ հատակ, գլանածն իրան, քիչ դուրս թերված շուրջը: Հատակին կան երեք հատած բորդի ձևի եղուսներ, իրանի կենտրոնում՝ մեկ կիսագնդած բռնակ, որի կենտրոնով անցնող քիչ բարձր եղանակութիւն և հատակի եզրերը զարդարված են թաց կավի վրա կտրելու նշանակով արված երկու շարք այլքազուտիներով: Գոտուոց քիչ վեր՝ իրանի հակառակիր կողմերում արված է երկար անցք (ստ. 5, նկ. 1): Դրա ընդհանուր տեսքը մահանցոյց է անում օգտագործման երեսքի ընտայք՝ որպես հենակ և անորթ: Այս իր ընդհանուր ձևով պատկանում է նմանատիպ հենակ-պատվանդանների խմբին, ոչը հայտնի է Առաջավոր Ասիայում (Palmier A., 1981, 102–119, Guneri E., 1998, 305–317), Հնդկաս-

տանում (Շետենկո Ա., 1968, 42–43), Արևելյան Եվրոպայում (Чайльд Г., 1952, 202), Հյուսիսային Կովկասում (Гаджиев М., 1991, 129–148), Չինաստանում (ԱՅԱ, 1986, 302) և Պարսկաստանում (Schaeffer Cl., 1948, Fig. 238): Վերջինս հարդարակրով ևս մերձնում է հիշյալ նմուշին:

Այսպիսով, ինչպես հարավկովկայան, այնպես էլ հարևան երկներից հայտնաբերված պատվանդանների տարրերատեսակները ցույց են տալիս դրանց կենցաղային-կիրառական ու ծիսական բնույթը (Պետրօսյան Լ., 2003, 77–82):

Լճաշենի վաղ բրոնզեդարյան թիվ 120 դամբարանը (պեղումները Հ. Մացականյանի) դամբարանախուց չի ունեցել: Թաղումը կատարված է եղել գետնի մակերեսին: Թաղման շրջանաձև հրապարակը ծածկված է եղել սայստակ հողով և նոյն երանզի խճարաբերով: Ունեցել է դեսի հրապարակ տանող 3 մ երկարությամբ միջանցք հիշեցնող մուտք, որտեղ բացվել է չորս, իսկ հրապարակում ինը մարդու կմախք, ըստ հեղինակի, հիմնականում նստած դիրքով: Նշգեցյալների մոտից հայտնաբերվել են կավանդանների շուրջ 200 մետր ու փոքր բեկորներ: Մի քանի վրա կան կիսագնդածն նորք կանթեր՝ առանց, հատկանշական սև, ուժեղ փայլի և զարդապատկերների: Այս դամբարանում առավել աչքի ընկած իրենքն են՝ պղնձել կիսապարույրի տեսքով ապարանջանը, երկու նմանօրինակ մատանիներն ու բնական, հարթ գետաքարից՝ կամիսիկ-զարդը (Մացականյան Հ., 1965, 96, աղ. 10, 1–7):

Այս դամբարանը նախորդներից առանձնանում է ոչ միայն դամբանախցի հատակածի առանձնահատկություններով, այլև խեցանքների յուրօրինակությամբ: Գավաթներն աչքի են ընկած ցածր վզով, դուրս թերված շուրջով, գնդածն իրանով, առավել ընդգծված լայն հատակով, իրաններին առկա անսովոր մեծ փոսիկով (աղ. 6, նկ. 1, 2): Կանթեր կան ոչ միայն վզի և ուսերի միացման տեղում, այլև իրանի կենտրոնական մասում (աղ. 6, նկ. 3–7): Այս խմբի նյութերն ընդհանուր ձևերով մասամբ կարելի է դասել շրեշթության և Կարնուտ-վանաձորյան խմբին, սակայն, յուրօրինակ են, ստորին մասի ոչ շեշտված անցումով, որոնց միակ ճշգրիտ օրինակը մեզ հայտնի է Արտանշիցից: Այսուա-

* Նմանօրինակ մի անորթ 2005 թ. Նորառության հայտնի Հնագիտության և ազգագրության հնատիտուս էր բերել Արգիշտի անունով մի երիտասարդ:

մենայնիվ, նշված ընդհանրությունները նկատի ունենալով, այս խումբը կարելի է համարել Ք.ա. III հազ. առաջին կեսին Հայաստանի տարածքում ձևավորված խեցեղեն արտադրանքի տեղային դրսերումներից:

Այսպիսով, չնայած Լճաշենում վաղբրոնգեղարյան ժամանակաշրջանի քննարկվող նյութեն-

րի սակավությանը, այնուամենայնիվ, դրանք հավաստում են, որ Ք.ա. IV հազ. կեսերից Սևանի ավազանն ընդգրկված էր տվյալ մշակույթի սկզբնավորման և ծևավորման շուրջ մեկ հազարամյա՝ Ք.ա. IV հազ. երկրորդ կես, III հազ. առաջին կեսի գործընթացներում:

2346

